ԼՄ 49143-2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1362

«27» 10 2020 թ. ք.Երևան

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի № 1624 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 740-Լ որոշմամբ հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության իրազեկման կարճ հաղորդակցությունների ցանկը հաստատելու մասին» № 1624 հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

27.10.2020

X

ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

Signed by: TSOLAKYAN FELIKS 3701520046

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ